«Յուփեյ» ՓԲԸ

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ
2020թ. համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ	3
Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն	5
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն	7
Դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն	8
Ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն	9

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Յուփեյ» ՓԲԸ-ի Տնօրենների խորհրդին

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ., այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և համապատասխան ծանոթագրությունը, պատրաստվել են «Յուփեյ» ՓԲԸ-ի («Ընկերություն») 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքով:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտումները: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացության ընթերցումը չի փոխարինում Ընկերության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացության ընթերցմանը:

Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք արտահայտել ենք չձևափոխված կարծիք աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ 2021թ. հունիսի 30-ի մեր աուդիտորական եզրակացությունում:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ

Ղեկավարության պատասխանատվությունն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքով ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է արտահայտել կարծիք, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ հիմք ընդունելով Աուդիտի միջազգային ստանդարտ 810 (վերանայված) *«Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ»* համաձայն իրականացված մեր ընթացակարգերը:

Իրինա Գևորգյան
Գործընկեր

Տիգրան Գասպարյան
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

KPMG Armenia LLC

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
30 հունիսի 2021թ.

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն առ 31 դեկտեմբերի 2020թ.

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Ակտիվներ		
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	7,263	9,910
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	7,278
Օգտագործման սահմանափակմամբ մնացորդներ բաժնետիրոջ հետ	165,000	-
Ոչ ընթացիկ ակտիվներ	**172,263**	**17,188**
Առևտրական դեբիտորական պարտքեր և այլ ընթացիկ ակտիվներ	25,913	24,286
Բաժնետիրոջից ստացվելիք գումարներ կապիտալի համալրման համար	-	177,390
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ	101,769	176,620
Բանկային ավանդներ	-	15,000
Ընթացիկ ակտիվներ	**127,682**	**393,296**
Ընդամենը ակտիվներ	**299,945**	**410,484**
Սեփական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	400,000	400,000
Կուտակված վնաս	(165,299)	(101,635)
Ընդամենը սեփական կապիտալ	**234,701**	**298,365**
Պարտավորություններ		
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	56,601	70,708
Ստացված կանխավճարներ	8,643	33,749
Վարձակալության գծով պարտավորություններ	-	7,662
Ընթացիկ պարտավորություններ	**65,244**	**112,119**
Ընդամենը պարտավորություններ	**65,244**	**112,119**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**299,945**	**410,484**

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվություն 2020թ. համար

հազ. դրամ	**2020թ.**	**2019թ.**
Հասույթ	170,861	171,633
Այլ եկամուտ	496	55
Անձնակազմի գծով ծախսեր	(180,537)	(173,468)
Մաշվածության և ամորտիզացիայի ծախս	(10,758)	(13,415)
Այլ ծախսեր	(50,035)	(53,384)
Դեբիտորական պարտքերի գծով արժեզրկման հակադարձում/(արժեզրկումից կորուստ)	2,610	(1,102)
Գործառնական գործունեության արդյունքներ	**(67,363)**	**(69,681)**
Ֆինանսական եկամուտ	4,040	2,556
Ֆինանսական ծախս	(341)	(1,350)
Զուտ ֆինանսական եկամուտ	**3,699**	**1,206**
Վնաս և այլ համապարփակ վնաս տարվա համար	**(63,664)**	**(68,475)**

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2021թ. հունիսի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Հայկ Թովմասյան
Գլխավոր տնօրեն

Լուսինե Գալստյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն 2020թ. համար

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	200,000	(33,160)	166,840
Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում			
Ներդրում բաժնետիրական կապիտալում	200,000	-	200,000
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	**200,000**	**-**	**200,000**
Ընդամենը համապարփակ վնաս			
Վնաս և այլ համապարփակ վնաս տարվա համար	-	(68,475)	(68,475)
Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար	**-**	**(68,475)**	**(68,475)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**400,000**	**(101,635)**	**298,365**
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	400,000	(101,635)	298,365
Ընդամենը համապարփակ վնաս			
Վնաս և այլ համապարփակ վնաս տարվա համար	-	(63,664)	(63,664)
Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար	**-**	**(63,664)**	**(63,664)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**400,000**	**(165,299)**	**234,701**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն 2020թ. համար

հազ. դրամ	2020թ.	2019թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Վնաս տարվա համար	(63,664)	(68,475)
Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով		
Մաշվածություն և ամորտիզացիա	10,758	13,415
Ֆինանսական եկամուտ	(4,040)	(2,556)
Դեբիտորական պարտքերի գծով արժեզրկման հակադարձում/(արժեզրկումից կորուստ)	(2,610)	1,102
Օգուտ սարքավորումների և ոչ նյութական ակտիվների վաճառքից	(458)	-
Այլ ոչ դրամական միավորներ	313	-
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում		
Օգտագործման սահմանափակմամբ մնացորդներ բաժնետիրոջ հետ	(165,000)	-
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(1,627)	(19,629)
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)		
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(14,107)	66,008
Ստացված կանխավճարներ	(25,106)	33,749
Գործառական գործունեության համար (օգտագործված)/գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական հոսքեր	**(265,541)**	**23,614**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,000)	(3,508)
Սարքավորումների և ոչ նյութական ակտիվների վաճառք	313	-
Բանկային ավանդների ելքագրում/(տեղաբաշխում)	15,000	(15,000)
Ստացված տոկոսներ	4,039	2,556
Ներդրումային գործունեությունից ստացված/ներդրումային գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**18,352**	**(15,952)**
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից	180,000	90,000
Վարձակալության գծով պարտավորությունների վճարումներ – հիմնական գումար	(7,662)	(9,321)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**172,338**	**80,679**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(74,851)**	**88,341**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	176,620	88,279
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	**101,769**	**176,620**

Դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

1. Պատրաստման հիմունքներ

Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «Յուփեյ» ՓԲԸ-ի («Ընկերություն») Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ ստորագրված 2021թ. հունիսի 30-ին: Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են միայն ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ. և այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, որոնք վերցվել են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների 6-ից 9-րդ էջերից՝ առանց որևէ փոփոխության: Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացված բացահայտումները: Ընկերության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները կարող են տրամադրվել ըստ պահանջի Ընկերության գրասենյակից (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի փ. 9):